# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 28.06.2024 թ. կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-24/77 «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ կարիքների համար «տպագրված այլ գրքերի» մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «26» Հոկտեմբեր 2024թ.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն», պետական ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրենի պարտականությունները կատարող Արմեն Հովհաննիսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՆՏԱՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Արմեն Մարտիրոսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 28.06.2024թ. կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-24/77 ծածկագրով «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար **տպագրված այլ գրքերի** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N 1 հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ Պայմանագրով հաստատված վերջնաժամկետը երկարաձգել, ապրանքների մատակարարման վերջին օրվան հաջորդող օրվանից հաշված 15 օրացույցային օրով:

1.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հիմքով և ժամանակացույցին համապատասխան:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ | «Անտարես» ՍՊԸ |
| ք. Երևան, Թաիրովի 15 | Ք. Երևան, Մաշտոցի 50ա/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, | ՀՎՀՀ 02519531 |
| ՀՀ 900018001843 | «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02511401 | Հ/հ 1930032650660100 |
| ---------- Արմեն Հովհաննիսյան | ---------- Արմեն Մարտիրոսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |